

## Տ. ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱ ԻՍԱՅԱՆ

*/ավազանի անունը՝ Հայկ/*

*Ծնվել է 1955 թ. Իրանի Թեհրան քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Թեհրանի Թունյան ազգային դպրոցում: 1970 թվականին ընտանիքով հայրենադարձվել է և բնակություն հաստատել Գյումրի քաղաքում: 1972 թ. սովորել և ավարտել է Պ. Դուրյանի անվան միջնակարգ դպրոցը: 1986 թ. օգոստոսի 1-ից ծառայել է Արարատյան Հայրապետական թեմում: 1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: 1992 թ. օգոստոսի 29-ին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի, ձեռնադրվել է սարկավագ: 1987-1996 թթ. ծառայել է Արմավիրի շրջանի Բամբակաշատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում: 1996 թ. սեպտեմբերի 29-ին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոսի, ձեռնադրվել է քահանա: Ամուսնացած է, ունի երեք երեխա:*